Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Արդի հայերենի երկրորդական նախադասությունների համակարգում իրենց արտահայտած իմաստային հարաբերությունների և կապակցության միջոցների բազմազանությամբ ուրույն տեղ են գրավում ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները։

Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները լրացնում են գլխավոր նախադասությանը՝ բացահայտելով նրա գործողության ժամանակը՝ նրա հետ միաժամանակ, նրան նախորդող կամ հաջորդող մի այլ գործողություն նկարագրելու միջոցով։

Ինչպես հայտնի է, բարդ ստորադասական նախադասություններում ստորադասական հարաբերության արտահայտման ամենակարևոր միջոցը շաղկապներն ու հարաբերական բառերն են։ Սակայն ժամանակային հարաբերություններ արտահայտելիս ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև քերականական մյուս միջոցները՝ նախադասությունների շարադասությունը, բառային կազմը, ժամանակների հաջորդականությունը։ Դրանցից ամենակարևորը գլխավոր և երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալների ժամանակների հաջորդականությունն է։ Եվ դա շատ բնական է, որովհետև գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև եղած ժամանակային փոխհարաբերությունները ամենից առաջ պետք է արտահայտվեն նրանց ստորոգյալների ժամանակներով։ Գլխավոր և երկրորդական նախադասությունների տարբեր ժամանակային փոխհարաբերություններն արտահայտելում մեծ դեր ունի նաև նրանց բառային կազմը, հատկապես եղանակային բառերի ու մակբայների օգտագործումը («հանկարծ», «հազիվ», դեռևս» և այլն)։

Ժամանակի երկրորդական նախադասությունների կապակցությունը գլխավոր նախադասության հետ իրացվում է այնպիսի հարաբերական բառերի ու շաղկապների միջոցով, որոնք իրենց բառային նշանակությամբ ցույց են տալիս ժամանակային հարաբերությունը։ Դրանք են՝ «երբ», «մինչև», «քանի», «քանի դեռ», «քանի որ», «հենց», «հենց որ»։ Բացառություն է կազմում միայն «որ» շաղկապը, որը կապակցում է գլխավոր և երկրորդական նախադասությունները՝ առանց իմաստային երանգ տալու այդ կապակցությանը։ Ժամանակային հարաբերությունը այս դեպքում արտահայտվում է բացառապես քերականական այլ միջոցներով՝ ժամանակների հաջորդականությամբ և եղանակային բառերի օգտագործմամբ։

Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն պարունակող բարդ ստորադասական նախադասություններում սովորաբար առկա են լինում հետևյալ ժամանակային փոխհարաբերությունները՝

1. Գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողությունները կատարվում են միաժամանակ։

2. Գլխավոր նախադասության գործողությունը հաջորդում է երկրորդական նախադասության գործողությանը։

3. Գլխավոր նախադասության գործողությունը նախորդում է երկրորդական նախադասության գործողությանը։

1. ՄԻԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԵ ՏՎՈՂ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միաժամանակություն ցույց տվող բարդ ստորադասական նախադասությունները ունենում են հետևյալ իմաստային նրբերանգները.

ա) Գլխավոր նախադասությամբ նկարագրվում է մի այնպիսի գործողություն, որի կատարման ժամանակը բացահայտվում է նրա հետ միաժամանակ տեղի ունեցած մի այլ գործողություն նկարագրելու միջոցով։ Հետևաբար՝ երկրորդական նախադասության գործողությունը կատարվում է գլխավորի գործողությանը զուգընթաց։ Գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև եղած այս իմաստային փոխհարաբերությունը արտահայտվում է հետևյալ քերականական միջոցներով։

Երկրորդական նախադասությունը ունենում է ազատ շարադա-

սություն (կարող է լինել առաջադաս, միջադաս կամ վերջադաս) և միանում է գլխավոր նախադասությանը «երբ» («երբ որ») հարաբերական բառով, երբեմն նաև «որ» շաղկապով, Բերենք մի քանի օրինակ.

«Ուսուցիչները սիրալիր ժպտում էին, երբ նա դաս էր պատասխանում» (Հ. Թ. 7)։ «Էն առվակում կեսօրին, երբ որ շոգից նեղանում, գնում էինք լողանում» (Հ. Թ. 5)։ «Պատը որ փուլ է գալիս, աչքերդ բնազդաբար փակում ես» (Ն. Դ. 5, 53)։

«Որ» շաղկապը այս տիպի նախադասություններում օգտագործվում է մեծ մասամբ բանավոր խոսքում և ժողովրդական բառ ու բանի մեջ (տե՛ս վերջին օրինակը)։

Շատ հազվադեպ այս տիպի ժամանակի երկրորդական նախադասությունը կարող է միանալ գլխավորին նաև «եթե», «թե որ» շաղկապներով, որոնք գործածվում են միայն առաջադաս երկրորդական նախադասությունների դեպքում։

Այս նախադասությունները չպետք է շփոթել պայմանի երկրորդական նախադասությունների հետ, որովհետև սրանք թեև ունեն պայմանի իմաստային երանգ, սակայն հիմնականում արտահայտում են գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև եղած ժամանակային փոխհարաբերությունները։

Օրինակներ՝ «Թե որ ձեռքերս մի բան է ընկնում, չենք կարողանում բերաններս հասցնել» (Հ. Թ. 8)։ «Եթե ազատ բոպեներ էին լինում, թեյի բաժակի կողքին բացում էի գիրքը և սկսում էի կարդալ» (Հ. Թ. 134)։

Այս տիպի նախադասությունների առկայությունը ցույց է տալիս, որ ժամանակի և պայմանի երկրորդական նախադասությունները փոխադարձորեն կապված են միմյանց հետ։

Երբ բարդ նախադասության մեջ խոսվում է սովորաբար զուգահեռ կատարվող գործողությունների մասին, այսինքն՝ գլխավոր նախադասության գործողության ժամանակը բացահայտվում է սովորաբար նրա հետ միաժամանակ կատարվող մի այլ գործողություն նկարագրելու միջոցով, երկրորդական նախադասությունը կարող է միանալ գլխավորին նաև «քանի» հարաբերական բառով. օրինակ՝ «Քանի մեր տուն գար, միշտ կոնֆետ կբերեր ինձ համար» (Ն. Դ. 5. 17)։

Գլխավոր նախադասության մեջ երկրորդականին կարող է համապատասխանել «այն ժամանակ» հարաբերյալը։

Օրինակ՝ «Երբեք կյանքն այնքան թանկագին չի թվում մարդուն՝ ինչքան այն ժամանակ, երբ նա վտանգի տակ է» (Հ. Թ. 52)։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողությունների կատարման միաժամանակությունը ցույց տալուն օժանդակում է գլխավոր նախադասության բառային կազմը։ Գլխավոր նախադասության մեջ հաճախ առկա է լինում մակբայով արտահայտված ժամանակի պարագա, որը ցույց է տալիս նրա գործողության կատարման ժամանակը։ Սակայն վերջինս լրիվ բացահայտվում է միայն այդ պարագայի ցույց տված ժամանակում կատարված մի այլ գործողություն նկարագրելու միջոցով։ Վերջինս տրվում է երկրորդական նախադասությամբ։ Այս տիպի երկրորդական նախադասությունը չպետք է շփոթել որոշիչ երկրորդական նախադասությունների հետ, որոնք կարող են հանդես գալ միայն գոյականով արտահայտված ժամանակի պարագայի հետ։ Գլխավոր նախադասության մեջ որպես ժամանակի պարագա կարող են հանդես գալ հետևյալ մակբայները՝ «հիմա», «այժմ», «ամեն անգամ», «միշտ», «մշտական» (վերջինս բարբառային է և գրականության մեջ հանդիպում է շատ սակավ)։ Երկրորդական նախադասությունը դրվում է գլխավոր նախադասության ժամանակի պարագայից հետո և այդ պատճառով կարող է լինել միայն միջադաս կամ վերջադաս (սովորաբար լինում է միջադաս)։

Օրինակներ՝ «Իսկ հիմա, երբ երկրի մեծագույն մասը հետ էր խլված թշնամուց, ...այժմ թագավորն ու սպարապետը անհրաժեշտ էին համարում նամակներ ուղարկել և այն նախարարներին....» (Ս. Զ. Պ. Թ. 116)։

«Եվ ամեն անգամ, երբ խոսք էր լինում գանձի մասին, նա տխրությամբ նայում էր վառարաններին և ասում» (Ս. Զ. ԶԳ. 184)։

«Մշտական, երբ որ կռիվ էր գնում,
Էնտեղ էր քո հերն իր աղոթքն անում» (Հ. Թ. 35)։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողությունների միաժամանակությունը արտահայտվում է ստորոգյալների ժամանակների համաձայնեցմամբ։ Երկրորդական նախադասության մեջ օգտագործվում է բայի նույն եղանակն ու ժամանակը, ինչ գլխավոր նախադասության մեջ է։ Բացառություն են կազմում միայն «քանի» հարաբերականով միացած երկրորդական նախադասությունները։

Տարբեր եղանակների ու ժամանակների օգտագործումը այս նախադասություններում կախված է ամբողջ բարդ նախադասության արտահայտած իմաստից։ Սահմանական եղանակի ներկա ժամանակը օգտագործվում է այն դեպքում, երբ ընդհանրապես դատողություն է արվում իրար հետ կատարվող գործողությունների մա-

սին, և կամ նկարագրվում է սովորաբար միաժամանակ հանդես եկող գործողություններ կամ եղելություններ։ Վերջին դեպքում օգտագործվում է անցյալ անկատար ժամանակ, երբ խոսքը վերաբերում է անցյալում սովորաբար իրար հետ կատարված գործողություններին։

Օրինակներ՝ «Երբ լուսինը կաթնագույն լույսով ողողում էր այդ սքանչելի բարձրությունը, պլպլացող խարույկի շուրջն էին կիտվում բոշաները» (Վ. Փ. 362)։ «Եվ երբ գիշերները նրա սուլոցն էին լսում՝ խեղճ, սիրտ կարտող երգը, ասում էին, որ Գոդին «աստծու թակածն է» (Ա. Բ. 520)։ «Երբ քաղաքի կենտրոնական փողոցներում դեռ նոր են կախում տոնական դրոշները, այս թաղի տների վրա արդեն ծփում է դրոշակների ծովը» (Ա. Բ. 218)։ «Ամեն անգամ, երբ իջնում է երեկոն և մայր մտնող արևի ճառագայթները հրդեհում են Արագածի ձյունածածկ գագաթները, սանատորիայի հրապարակում սառվում են խարույկները» (Ս. Հ.)։

Բայի ներկա ժամանակն է օգտագործվում նաև այն ժամանակի երկրորդական նախադասություններում, որոնցով հաղորդվում են ժողովրդական առածներ։

Օրինակ՝ «Էծի մեջքը որ քոր է գալիս, քսում է չոբանի մահակին» (Ս. Խ. Հ. 74)։

բ). Միաժամանակություն ցույց տվող բարդ ստորադասական նախադասություններում գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև կարող է գոյություն ունենալ հետևյալ ժամանակային հարաբերությունը. երկրորդական նախադասությամբ տրվում է մի այնպիսի գործողություն կամ եղելություն, որի կատարման մի որևէ մոմենտում տեղի է ունենում, վերջանում է գլխավոր նախադասության գործողությունը։

Օրինակ՝ «Երբ իջնում էինք կառքից, բակի դռան շեմքում կանգնած մի կին շտապով անհետացավ» (Ն. Դ. 25)։

Այստեղ գլխավոր նախադասության գործողությունը («բակի դռան շեմքում կանգնած մի կին շտապով անհետացավ») կատարվում, վերջանում է երկրորդական նախադասության գործողության կատարման մի մոմենտի ընթացքում։ Ժամանակային այս հարաբերությունը արտահայտվում է հետևյալ քերականական միջոցներով։

Երկրորդական նախադասությունը միանում է գլխավորին «երբ» («երբ որ») հարաբերական բառով։

Օրինակներ՝ «Երբ ես զննում էի այդ բոլորը, իմ մեջ հարց ծագեց» (Վ. Փ. 352)։

«Ինչպե՞ս վեր ընկար դու սարի նման,

Երբ որ նայում էր ողջ գյուղը կանգնած» (Հ. Ք. 25)։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցությանը կարող են օժանդակել նաև «այն ժամանակ» կամ «այն միջոցին» հարաբերյալները, որոնք հանդես են գալիս գլխավոր նախադասության մեջ։

Օրինակ՝ «Աստված պատժեց նրան հենց այն ժամանակ, երբ նա կարծում էր, թե ինքը արդեն ամենազոր է և թշնամիներից ապահովված (Մ. Դ. Մ. 311)։

Երբ անհրաժեշտ է լինում հատկապես շեշտել գլխավոր նախադասության գործողության կատարման ժամանակը, նրանում հարաբերյալի հետ միասին կարող են օգտագործվել եղանակային բառեր։ Այդպիսին է, օրինակ, վերջին նախադասության մեջ օգտագործված «հենց» ուժեղացնող բառը, որի նպատակն է շեշտել գլխավոր նախադասության գործողության՝ երկրորդականի ընթացքում կատարվելը։

Բայի ստորոգյալների ժամանակների հաջորդականությունը այս տիպի բարդ ստորադասական նախադասություններում հետևյալն է. երկրորդական նախադասության ստորոգյալը միշտ դրվում է բայի անցյալ անկատար ժամանակով, որը ցույց է տալիս տևական, չավարտված գործողություն։ Իսկ երբ երկրորդական նախադասությամբ տրվում է որևէ դրություն, որի առկայության ընթացքում է կատարվում գլխավոր նախադասության գործողությունը, այդ դեպքում երկրորդական նախադասության ստորոգյալը լինում է բազադրյալ՝ կազմված դրություն ցույց տվող բառից և օժանդակ բայի անցյալ ժամանակից։ Երկու դեպքում էլ գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է բայի անցյալ կատարյալ ժամանակով, որով ցույց է տրվում երկրորդական նախադասության գործողության կատարման որևէ մոմենտում արդեն կատարված, վերջացած գործողություն։

Օրինակներ՝ «Երբ դիրեկտորը ժողովի առաջ հրապարակում էր Կույրիշևից ստացված նամակը, առաջին պահ էմման զգաց անզուսպ մի ցնծություն» (Դ. Ք. 29)։ «Ապստամբության պարտությունից հետո գնդակահարվեց, երբ որդին 6—7 տարեկան էր» (Հ. Ք. 7)։

Երբ գլխավոր նախադասության մեջ պատմվում է վաղ անցյալում կատարված գործողության մասին, իսկ երկրորդական նախադասությամբ տրվում է մի այնպիսի վիճակ, դրություն, որի ընթացքում կատարվել է այն, ապա գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է սահմանական եղանակի վաղակատար ժամանակով։

Օրինակներ՝

«Այդ երգը, սիրտ, գիտես դու,
Երգել եմ և ես,
Երբ որ պատանի էի
Հրավառ ու վեսս» (Ավ. Իս. 290)։

«Տասը տարի առաջ, երբ դեռ Կարոյի հայրը ողջ էր, տեղի էր ունեցել մի դեպք» (Հ. Ք. 28)։

գ). Ժամանակային հարաբերությունը միաժամանակություն ցույց տվող գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև կարող է լինել նաև այսպիսին. գլխավոր նախադասությունը ցույց է տալիս սկսված և ընթացքի մեջ գտնվող գործողություն, իսկ երկրորդական նախադասությամբ տրվում է մի այնպիսի գործողություն, որն սկսվել ու վերջացել է գլխավորի գործողության կատարման ընթացքում։

Օրինակ՝ «Պատեֆոնը կրկնում էր «Բարեկենդանի» վերջին բառերը, երբ Ծովինարը մտավ մեծ ու քառակուսի սենյակը» (Ք. Թ. Ա. 199)։

Ստորադասական հարաբերությունը այս տիպի նախադասություններում արտահայտված է յուրօրինակ ձևով։ Հայտնի է, որ այս բարդ նախադասության մասերից մեկը ստորադասված է մյուսին, սակայն շատ դժվար է որոշել, թե որն է ստորադասված մյուսին։ Երբ վերցնում ենք նախադասության մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերությունները, ապա թվում է, թե առաջին նախադասությունն է ստորադասված երկրորդին, քանի որ առաջին նախադասության գործողության կատարման ժամանակով է որոշվում երկրորդական նախադասության կատարման ժամանակը։ Իսկ երբ վերցնում ենք բարդ նախադասության քերականական կառուցվածքը, ապա ստորադասական պետք է համարել երկրորդ նախադասությունը, որովհետև ստորադասական շաղկապը գտնվում է նրա կազմի մեջ (տե՛ս վերևի օրինակը)։ Հետևաբար՝ այս տիպի բարդ ստորադասական նախադասություններում երկրորդական պետք է համարել այն նախադասությունը, որը միանում է ստորադասական շաղկապով և ցույց է տալիս մյուս (գլխավոր) նախադասության գործողության որևէ մոմենտում կատարված վերջացած գործողություն։

Ժամանակային այս հարաբերության դեպքում ստորադասական կապակցությունը իրացվում է հետևյալ քերականական միջոցներով։

Երկրորդական նախադասությունն ունենում է ազատ շարադա-

սություն և միանում է գլխավորին «երբ» հարաբերական բառով, շատ հազվադեպ նաև «որ» շաղկապով։

Օրինակներ՝ «Պատրաստվում էի պառկելու, երբ դռան զանգակը հնչեց» (Ն. Դ. 5, 77)։ «Երբ արձակուրդը վերջացավ և նա վերադարձավ քաղաք, ձեռքի տակ ուներ պիեսի երկու փոփոխակ» (Ք. Թ. Պ. 24)։ «Մի գարնան իրիկուն էր, որ այս դեպքը պատահեց» (Հ. Թ. 223)։

Այս երկրորդական նախադասությունները ևս միանում են «որ» շաղկապով մեծ մասամբ բարբառներում ու բանավոր խոսքում։ Գրական գրականության մեջ այս տիպի կապակցությունը բոլորովին չի օգտագործվում, իսկ գեղարվեստական գրականության մեջ օգտագործվում է շատ հազվադեպ, այն էլ բարբառների ազդեցությամբ։

Ստորադասական կապակցությունը իրացվում է նաև ժամանակների հաջորդականությամբ, որն այս նախադասություններում հետևյալն է։ Քանի որ գլխավոր նախադասության մեջ տրվում է սկսված, բայց չավարտված գործողություն, նրա ստորոգյալը դրվում է սահմանական եղանակի անցյալ անկատար, երբեմն նաև անցյալ վաղակատար ժամանակով։ Երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է անցյալ կատարյալ ժամանակով, որովհետև նրանով տրվում է որոշ ժամանակում կատարված, ավարտված գործողություն։

Օրինակներ՝ «Երբ Վաղոն կուժը ձեռին մտավ բակը, դուրգարի կինը պատշգամբում կար էր անում» (Ս. Ջ. ԶԳ. 196)։ «Գրեթե մոռացել էի բարեկամներիս, երբ բախտը նորից դեմ հանդիման բերեց մեզ իրար» (Ն. Դ. 5, 53)։

Գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է ցույց տալ նաև մի այնպիսի դրություն կամ վիճակ, որի մեջ գտնվում է գլխավորի ենթական, երբ կատարվում է երկրորդական նախադասության գործողությունը։ Այս դեպքում գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել կամ բայի անցյալ հարակատար ժամանակով, կամ էլ լինել բաղադրյալ։ Վերջին դեպքում ստորոգելիական հանգույցը անպայման դրվում է անցյալ ժամանակով։

Օրինակներ՝ «Դու խոր քնած էիր, երբ ընկերս եկավ» (Ք. Թ. Պ. 74)։ «Նանը մտորումների մեջ էր, երբ նրան մոտեցավ Արսեն Տոնոյանը» (Հ. Ք. 170)։

Գլխավոր նախադասության մեջ կարող է հանդես գալ «արդեն» ժամանակի պարագան։ Նրանով ընդգծվում է, որ երկրորդական նախադասության գործողությունը կատարվել է գլխավորի գործողության կատարման ընթացքում։

Օրինակ՝ «Արդեն ուշ երեկո էր, երբ նա միջանցքում վերցնելով ինչ-որ մեկի շալը, գցեց ուսերին և դուրս եկավ փողոց» (Գ. Ս. Թ. 10)։

Ժամանակային այսպիսի հարաբերության դեպքում գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ բառ առկա չի լինում (տե՛ս վերևի օրինակները)։

դ). Միաժամանակություն ցույց տվող ժամանակի երկրորդական նախադասությունները կարող են ունենալ ժամանակային սահմանափակության նշանակություն և ցույց տալ, որ գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է (պիտի կատարվի) այնքան ժամանակ, քանի դեռ տեղի է ունենում երկրորդական նախադասության գործողությունը։ Այլ կերպ ասած՝ գլխավոր նախադասության գործողության կատարման ժամանակը սահմանափակված է երկրորդական նախադասության գործողության ժամանակով։ Այս նշանակությունն ունեցող ժամանակի երկրորդական նախադասությունները միանում են գլխավորին հետևյալ քերականական միջոցներով։

Երկրորդական նախադասությունն ունենում է ազատ շարադասություն և միանում է գլխավորին «քանի», «քանի դեռ» շաղկապներով (երբեմն նաև «քանի որ»)։

Օրինակներ՝ «Եվ նա ծանր ու հանդիսավոր քայլերով մտավ արքայական սրահները, մտածելով, թե քանի շուտ է, քանի դեռ թագավորի մոտ մարդիկ չեն եկել՝ կատարի իր մտադրությունը» (Ս. Զ. Պ. Թ. 112)։ «Քանի կենդանի էր, բամբասում էիք, զրպարտում» (Շ. 4. 22)։ «Ու քո շվաքում քանի որ մենք կանք, քո ծառան լինենք, քո խարշը միշտ տանք» (Հ. Թ. 39)։

Ժամանակային այսպիսի հարաբերություն պարունակող բարդ նախադասություններում սովորաբար խոսվում է տևական, ընթացքի մեջ գտնվող գործողությունների մասին, այդ պատճառով էլ բայի անցյալ կատարյալ ժամանակը բոլորովին չի օգտագործվում։ Գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է դրվել սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակով, ըղձական, հարկադրական եղանակներով։ Անկախ գլխավոր նախադասության ստորոգյալի ժամանակից՝ երկրորդական նախադասության մեջ ստորոգյալն ունենում է հետևյալ ձևերը.

1. Երբ ստորոգյալն ունենում է ժխտական ձև, նա միշտ դրվում է վաղակատար կամ անցյալ վաղակատար ժամանակներով. օրինակ՝ «Այս հարցը պետք է լուծել, քանի դեռ նա չի գնացել»։

2. Երկրորդական նախադասության ստորոգյալը կարող է լինել բաղադրյալ, որով տրվում է այնպիսի վիճակ կամ դրություն, որի գոյության ամբողջ ընթացքում կատարվելու է (կամ կատարվում է) գլխավոր նախադասության գործողությունը. օրինակ՝ «Քանի կենդանի եմ, կհիշեմ քո այդ խորհուրդը»։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալներն իրենց ժամանակներով կարող են համաձայնել իրար հետ՝ հատկապես անցյալ անկատար ժամանակի օգտագործման դեպքում, Օրինակ՝ «Քանի Մարզպետունի իշխանը գանվում էր Գառնո բերդի մեջ, բերդակալական պաշտոնը վարում էր նա անձամբ» (Մ. Գ. Մ., 21)։

Այսպիսի իմաստային փոխհարաբերության առկայության դեպքում երկրորդական նախադասությունը կարող է միանալ գլխավորին նաև «մինչ», «մինչդեռ» շաղկապներով։

Այս նախադասությունները բացի միաժամանակության իմաստից ունեն նաև սահմանափակության նշանակություն, այսինքն՝ ցույց են տալիս, որ գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է ժամանակի այն սահմաններում, երբ տեղի է ունենում երկրորդական նախադասությամբ հաղորդված գործողությունը։ Այս նախադասություններն ունեն երկու ենթատեսակ.

1. Գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է երկրորդական նախադասության գործողության կատարման ամբողջ ընթացքում. օրինակ՝ «Մինչ նա ծանր ու բարակ բարձրանում էր, աչքերը՝ մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ պտտելով զննում էին հարուստ տան մուտքը» (Շ. Կ. 38)։

2. Գլխավորի գործողությունը կատարվում է երկրորդական նախադասության գործողության մի որևէ մոմենտում. օրինակ՝ «մինչդեռ իջնում էի մութ նախասենյակի սանդուղքով, զանգակը երրորդ անգամ հնչեց» (Ն. Դ. 5, 11)։

Երկու դեպքում էլ միաժամանակություն արտահայտելու քերականական միջոց են հանդիսանում ժամանակների հաջորդականությունը (առաջին դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները իրենց ժամանակներով համաձայնում են, իսկ երկրորդ դեպքում գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է անցյալ կատարյալ ժամանակով, իսկ երկրորդական նախադասության ստորոգյալը՝ անցյալ անկատար ժամանակով)։ «Մինչ» և «մինչդեռ» շաղկապները ցույց են տալիս գլխավոր նախադասության գործողության սահմանափակում երկրորդական նախադասության գործողության ժամանակի սահմաններում։

2. ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակային հաջորդականություն ցույց տվող բարդ ստորադասական նախադասությունները կարելի է բաժանել երկու խմբի.

1. Գլխավոր նախադասության գործողությունը հաջորդում է երկրորդական նախադասության գործողությանը։

2. Գլխավոր նախադասության գործողությունը նախորդում է երկրորդական նախադասության գործողությանը։

ա). Երբ գլխավոր նախադասության գործողությունը հաջորդում է երկրորդական նախադասության գործողությանը, երկրորդական նախադասությունը բացահայտում է գլխավորի գործողության կատարման ժամանակը՝ նրան նախորդող մի այլ գործողություն նկարագրելու միջոցով։

Օրինակ՝ «Երբ ամեն ինչ կազմ ու պատրաստ եղավ, նա ելավ Դվինից գիշերանց և ուղղվեցավ դեպի Սևան» (Մ. Դ. Մ. 333)։

Այս երկրորդական նախադասությունները շատ հաճախ ունենում են պատճառի իմաստային երանգ, այսինքն՝ ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որը նախորդելով գլխավոր նախադասության գործողությանը, միաժամանակ նպաստում, կարծես պատճառ է հանդիսանում վերջինիս կատարման համար։ Այս իմաստային երանգը հատկապես ցայտուն կերպով երևում է, երբ երկրորդական նախադասությունը միանում է գլխավորին «որ» շաղկապով։ Իհարկե, այս նախադասությունները չի կարելի համարել պատճառի, քանի որ այստեղ հիմնական շեշտը դրվում է ժամանակի վրա, ընդգծվում է գլխավոր նախադասության գործողության կատարման ժամանակը։

Ժամանակային փոխհարաբերությունները այս նախադասություններում արտահայտվում են հետևյալ քերականական միջոցներով։

Երկրորդական նախադասությունը սովորաբար ունենում է առաջադաս շարադասություն և միանում գլխավորին «երբ» («երբ որ») հարաբերական բառով, երբեմն նաև «որ» շաղկապով։

Բերենք մի քանի օրինակ. «Իսկ երբ լսեց, որ Շմավոնին հանում են, գլխին կացնի հարված ստացածի պես նայեց Մաթոս Գրիգորյանին» (Ն. Ջ. Հ. 22)։ «Երբ խոսք բաց արի թատրոնի ու երաժշտության մասին, պատանին կերպարանափոխվեց» (Շ. 4. 423)։ «Որ իմացավ ով եմ, այնքան ուրախացավ, որ կարծես կորցրած որդի ուներ ու հանկարծ գտավ» (Ն. Դ. 15)։

Երբ որպես կապակցող բառ հանդես է գալիս «որ» շաղկապը,

երկրորդական նախադասությունը միշտ լինում է առաջադաս։ «Որ» շաղկապը երբեմն կարող է դրվել ոչ թե երկրորդական նախադասության սկզբում, այլ մեկ կամ մի քանի անդամից հետո։

Օրինակ՝

«Երգս որ լսեց իմ դժբախտ մուսան,
Իսկույն հավաքեց իր փասա-փուսան» (Հ. Թ. 20)։

Երկրորդական նախադասության ցույց տված ժամանակը շեշտելու համար երբեմն նրան գլխավոր նախադասության մեջ կարող են համապատասխանել «այն ժամանակ», «այն պահից հետո» հարաբերյալները. այսպես՝

«Դա պատահեց այն պահից հետո, երբ խաթիբը կրճատվեց Աշրաֆիի գործարանից» (Գ. Ս. Թ. 20)։ «Հավաքարարուհին այն ժամանակ շուռ եկավ, երբ նրա ականջին հասան ոտնաձայներ» (Ք. Թ. Պ. 55)։

Գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ կարող է լինել այն դեպքում, երբ երկրորդական նախադասությունը վերջադաս է։

Բայի ժամանակների օգտագործումն այս նախադասություններում հետևյալն է. գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները ժամանակով համաձայնում են իրար։ Այս նախադասություններում շատ է տարածված անհմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի օգտագործումը, որը ցույց է տալիս արդեն կատարված, վերջացած գործողություն (տե՛ս վերևի օրինակները)։

Երբ բարդ նախադասության մեջ խոսվում է ընդհանրապես անցյալում կատարված գործողության կամ եղելության մասին (կատարման կոնկրետ ժամանակն անհայտ է), այդ դեպքում և՛ գլխավոր, և՛ երկրորդական նախադասությունների ստորոգյալները դրվում են վաղակատար ժամանակով։

Օրինակ՝ «Շատ ժամանակ է անցել այն պահից հետո, երբ վերջին անգամ հանդիպել եմ նրան»։

Երբ բարդ նախադասությամբ տրված ժամանակային հարաբերությունն ունի սովորության նշանակություն, այսինքն՝ երբ գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողությունները սովորաբար պարբերաբար հաջորդում են իրար, բարդ նախադասության մեջ օգտագործվում է անցյալ անկատար ժամանակը, իսկ երբ ընդհանուր դատողություն է արվում տվյալ երևույթների ժամանակային կապի մասին, օգտագործվում է ներկա ժամանակը։

Օրինակներ՝ «Վևոնը կանգնում էր շարքի ետևում, և երբ բավական մոտենում էր կասսին, յուր հերթը ծախում էր ցանկացողին

5—10 կոպեկով (Շ. 4. 425)։ «Երբ խախտվում է մի ծրագիր, խախտվում են տասնյակ այլ նախագծեր, որ կապված են նրա հետ» (Հ. Ք. 229)։

Գլխավոր և երկրորդական նախադասություններում բայի պայմանական եղանակի ձևերն օգտագործելիս երկրորդական նախադասությունն ունենում է պայմանի իմաստային երանգ, այսինքն՝ երկրորդական նախադասությամբ տրվում է մի այնպիսի գործողություն, որի կատարումից հետո միայն պիտի տեղի ունենա գլխավոր նախադասության գործողությունը։ Այս տիպի նախադասությունները, իհարկե, դեռևս պայմանի նախադասություններ չեն, որովհետև այստեղ հիմնական ուշադրությունը դարձվում է ոչ թե պայմանի նշանակության, այլ գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև եղած ժամանակային հարաբերության վրա, այն բանի վրա, որ գլխավոր նախադասության գործողությունը կատարվելու է երկրորդական նախադասության գործողության կատարվելուց հետո[1]։

Օրինակներ՝ «Այ կուրախանա, երբ կիմանա, որ դուք այստեղ եք» (Հ. Թ. 197)։ «Երբ որ կտեսնեմ մի ոտս արդեն գերեզմանումն է, նոր կգամ ձեր այս մեռելների աշխարհը» (Ն. Դ. 5. 59)։

Ժամանակային այսպիսի հաջորդականություն ցույց տվող բարդ ստորադասական նախադասությունները չպետք է շփոթել ժամանակային հետևողականություն ցույց տվող բարդ համադասական նախադասությունների հետ, որովհետև այստեղ ոչ թե տրվում է գործողությունների սոսկական հաջորդականությունը, ինչպես համադասության ժամանակ, այլ գործողություններից մեկը բերվում է միայն որպես օժանդակ միջոց՝ մյուս գործողության ժամանակը ճիշտ որոշելու համար։

Այս տարատեսակի ժամանակի նախադասությունները կարող են ունենալ հետևյալ իմաստային նրբերանգը. գլխավոր նախադասության գործողության ժամանակը որոշվում է նրան անմիջապես նախորդող մի այլ գործողություն կամ եղելություն նկարագրելու ճանապարհով։ Այս դեպքում երկրորդական նախադասությունը սովորաբար լինում է առաջադաս և միանում գլխավորին «հենց որ» (երբեմն ուղղակի «հենց») շաղկապով, որը հենց իր բառային նշանակությամբ ցույց է տալիս գործողությունների անմիջական հաջորդականություն։ Այս երկրորդական նախադասությունները միանում են գլխավորին նաև «թե չէ» բառակապակցությամբ։

---

[1] Պայմանի երկրորդական նախադասությունների մի մասն առաջացել է հենց այս ժամանակի պարագա երկրորդական նախադասություններից՝ պայմանի իմաստային հրանդի ուժեղացման հետևանքով։

Օրինակներ՝ «Հենց որ գարունը բացվեր, տատս կնստեր ձի, մի գյուղացի կբարձրացներ ինձ, կգներ ձիու գավակին» (Գ. Մ. 325)։

«Էսպես վերևից հենց կանչեց աստված,
Փոքրիկ որբերը փոխվեցին հանկարծ» (Հ. Թ. 57)։

Ցուցորինակ կառուցվածք ունեն այն նախադասությունները, որոնց մեջ որպես կապակցության միջոց հանդես է գալիս «թե չէ» բառակապակցությունը։ Երկրորդական նախադասությունն այս դեպքում որպես կանոն լինում է առաջադաս, իսկ «թե չէ» շաղկապը դրվում է ոչ թե երկրորդական նախադասության սկզբում, ինչպես ընդունված է հայերենում, այլ վերջում։ Գլխավոր նախադասությունն անմիջապես հաջորդում է նրան։

Օրինակներ՝ «Ահմադը հիվանդանում էր թե չէ, մեր ուրախությունն էլ հետը կտրում էր» (Հ. Թ. 214)։

«Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ
Տասը գոմշի ուժ պակասեց» (Ն. տ. 39)։

Գլխավոր նախադասության մեջ երբեմն հանդես են գալիս «անմիջապես», «իսկույն» ժամանակի պարագաները, որոնցով ավելի է ընդգծվում գլխավոր նախադասության գործողության՝ երկրորդականին անմիջապես հաջորդելու գաղափարը։

Օրինակներ՝ «Այսօր զարթնել է թե չէ, իսկույն տնից դուրս է եկել» (Շ. 4. 436)։

«Այդ պատճառով հենց որ նա վեհափառի բերած լուրն իմացավ, անմիջապես դեպի զորանոցներն անցավ» (Մ. Գ. Մ., 222)։

Այս նախադասություններում ստորադասական կապակցության արտահայտման համար կարևոր է այն, որ գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները ժամանակներով համաձայնում են։

Անցյալում կատարված գործողությունների անմիջական հաջորդականությունն արտահայտելու դեպքում թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական նախադասությունների ստորոգյալները դրվում են անցյալ կատարյալ կամ վաղակատար ժամանակներով (տե՛ս վերևի օրինակները)։

Եթե գլխավոր նախադասությամբ տրվում է այնպիսի գործողություն, որը սովորաբար անմիջապես հաջորդում է երկրորդական նախադասությամբ տրված գործողությանը, այդ դեպքում և՛ գլխավոր, և՛ երկրորդական նախադասությունների ստորոգյալները դրվում են ներկա կամ անցյալ անկատար ժամանակներով։

Օրինակներ՝

«Գիշերը լուսնի երկչոտ շողերը
Հենց որ մտնում են էն խավար ձորը...,
Ոգի է առնում ամեն բան էնտեղ,
Շնչում է, ապրում, և մութն է ահեղ» (Հ. Թ. 5)։

«Սակայն հենց որ նկատում էին քարտուղարի կողմն ուղղված Անուշի հուսահատական ժպիտը, նորից խուլ փոթկացնում էին» (Ն. Ջ. Հ., 58)։

Երբ բարդ նախադասությամբ տրվում են ապագայում սպասվող իրար անմիջապես հաջորդող գործողություններ, այդ դեպքում երկրորդական նախադասության ստորոգյալը միշտ դրվում է ըղձական եղանակով, իսկ գլխավորի մեջ օգտագործվում են պայմանական կամ հարկադրական եղանակները։ Այս նախադասությունները ևս ունենում են պայմանի իմաստային երանգ։

Օրինակ՝ «Հենց որ աղաղակն ու հրդեհն սկսվեն, թշնամին շփոթված պիտի փախչի» (Մ. Գ. Մ. 328)։

Գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է դրվել նաև հրամայական եղանակով. գլխավոր նախադասությամբ հորդորվում, հրամայվում է կատարել մի գործողություն՝ երկրորդական նախադասությամբ տրված գործողության կատարվելուց անմիջապես հետո։

Օրինակ՝ «Հենց որ տեսնես, շուտ կրակիր» կամ՝ «Դու ջուրը վերջացնես թե չէ, գնա քաղհանավորների մոտ»։

Այս դեպքում ևս երկրորդական նախադասության մեջ օգտագործվում է ըղձական եղանակ։ Սակայն երբեմն, երբ հաղորդածն ավելի շոշափելի են ուզում դարձնել, կարող է օգտագործվել սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը՝ ըղձականի ապառնու իմաստով։

Օրինակ՝ «Այդ իմացողի համար դժվար չէ ազատվել նրա ճանկերից. հենց կուտապ եկավ ու թռավ, դու մի կողմի վրա խույս տուր» (Վ. Ա. Հ. Գ.)։

Անմիջապես հաջորդականություն ցույց տալու համար օգտագործվում է նաև հետևյալ քերականական միջոցը. առաջադաս երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է անցյալ կատարյալ ժամանակով և կրկնվում է ժխտական ձևով։

Օրինակ՝ «Հենց ասին-չասին անմեղ բերանով, աստված որոտաց իր գթոտ ձայնով» (Հ. Թ. 57)։

Գլխավոր նախադասությունը կարող է ցույց տալ նաև մի այնպիսի գործողություն, որը պիտի կատարվի, սակայն դեռ այդ գործողությունը չկատարված՝ տեղի է ունենում երկրորդական նախա-

դասությամբ տրված գործողությունը։ Այս հարաբերության քերականական արտահայտման միջոցներն են. երկրորդական նախադասությունը միշտ ունենում է հետադաս շարադասություն և միանում է գլխավորին «երբ» հարաբերական բառով, երբեմն նաև «որ» շաղկապով։ Գլխավոր նախադասության ստորոգյալը միշտ դրվում է ժխտական ձևով, իսկ նրանից առաջ հանդես է գալիս «դեռ» մակբայը։ Գլխավոր նախադասության ստորոգյալը միշտ դրվում է բայի անցյալ վաղակատար ժամանակով, իսկ երկրորդական նախադասության ստորոգյալը՝ անցյալ կատարյալ ժամանակով։

Օրինակներ՝ «Դեռ Աղոն չէր շտկվել, երբ կարկուտի նման նրա վրա տեղատարափեցին ձնագնդերը (Ք. Թ. Պ., 83)։ «Թագավորը դեռ չէր վերադարձել՝ որ նա գնաց և աբխազաց Գուրդեն մեծ իշխանի դստեր հետ ամուսնացավ» (Մ. Գ. Մ., 77)։

Պետք է նշել, որ այս բարդ նախադասությունները ցույց են տալիս բացառապես անցյալում կատարված գործողություն և ունեն ժամանակային հաջորդականության նշանակություն։ Սրանք տարբերվում են վերևում նկարագրված նույն նշանակությունն ունեցող բարդ ստորադասական նախադասություններից միայն իրենց կառուցվածքով (համեմատիր՝ «Բայց դեռ չէր հասել Արծրունյաց ոստանին, երբ լուր հասավ...» և «Հասավ Արծրունյաց ոստանին այն բանից հետո, երբ լուր հասավ...»)։

Այստեղ գլխավոր նախադասությունն ունի ժխտական կառուցվածք, որովհետև ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը չէր կատարվել մինչև երկրորդական նախադասության գործողության տեղի ունենալը։

բ). Երբ գլխավոր նախադասության գործողությունը նախորդում է երկրորդական նախադասության գործողությանը, ժամանակային հաջորդականություն ցույց տվող բարդ ստորադասական նախադասությունները կարող են ունենալ հետևյալ իմաստային նրբերանգները։

1. Գլխավոր նախադասության մեջ նկարագրվում է անցյալում կատարված մի գործողություն, որի կատարման ժամանակն ավելի կոնկրետ ու որոշակի դարձնելու համար երկրորդական նախադասությամբ նկարագրվում է նրան անմիջապես հաջորդած մի այլ գործողություն։ Այսպիսի հարաբերությամբ ստորադասական կապակցության արտահայտման միջոցները հետևյալներն են.

երկրորդական նախադասությունը միշտ լինում է հետադաս և միանում է գլխավորին «երբ» հարաբերական բառով (երբեմն նաև «որ» շաղկապով)։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցությանը օժանդակում է ամբողջ բարդ նախադասության թառային կազմը։ Գլխավոր նախադասության մեջ հանդես են գալիս «հազիվ» և «նոր» մակբայները, որոնք մի կողմից ցույց են տալիս, որ գլխավոր նախադասության գործողությունն արդեն ավարտվել է (իհարկե, բայի ժամանակի հետ միասին), իսկ մյուս կողմից ակնարկում են, որ նախադասությունը դեռ չի վերջացել, որ նրան անմիջապես հաջորդել է մեկ այլ գործողություն։ Երկրորդական նախադասության մեջ կարող են առկա լինել «արդեն» կամ «հանկարծ» մակբայները։ Գլխավոր նախադասության ստորոգյալը «հազիվ» և «նոր» պարագաների մոտ միշտ դրվում է անցյալ վաղակատար ժամանակով, իսկ երկրորդական նախադասության ստորոգյալը գրվում է անցյալ կատարյալ ժամանակով։ Սրանով ցույց է տրվում, որ երկրորդական նախադասության գործողությունը կատարվել վերջացել է գլխավորի գործողության ավարտվելուց անմիջապես հետո, համարյա այդ գործողության ավարտվելու հետ միաժամանակ։

Օրինակներ՝ «Արևի առաջին շողերը հազիվ էին հասել գյուղին, երբ Գարեգինն արթնացավ» (Ս. Խ. Հ. 238)։ «Բայց հազիվ գորշ խորքի վրա սկսել էր գծվել հայկական մի հին ամրոցի տխուր ավերակների կույտը, որ հանկարծ մեր ետևից լսվեց... բարձր շառաչ» (Վ. Փ. 182)։

Երբեմն, երբ հաղորդվում է սովորաբար իրար հաջորդող գործողությունների մասին, գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները դրվում են ներկա ժամանակով. օրինակ՝ «Հազիվ ես կարողանում տեսակավորման վանդակավոր արկղը հաստատել նոր տեղում, երբ արդեն բլինդաժի մուտքի մոտ բազմություն է հավաքվում» (Գ. Թ.)։

Երբեմն երկրորդական նախադասության ստորոգյալը լինում է բաղադրյալ և ցույց է տալիս այն հետևանքը, որ առաջացել է գլխավոր նախադասության գործողությունից անմիջապես հետո կատարված մի այլ գործողությունից։ Վերջինիս մասին բարդ նախադասության մեջ թեև չի խոսվում, բայց նրա կատարված լինելը հասկացվում է. օրինակ՝ «Ոտքը հազիվ էր դիպել ասպանդակին, երբ նա արդեն թամբի վրա էր» (Ս. Խ. Հ. 77)։

2. «Մինչև», «մինչև որ» շաղկապներով միացող ժամանակային հաջորդականություն ցույց տվող երկրորդական նախադասությունները ևս ունեն ժամանակային սահմանափակության նշանակություն։ Սրանք ցույց են տալիս, որ գլխավոր նախադասության գործողությունը շարունակվում է մինչև մի այլ գործողության սկըս-

վելը։ Այս նախադասություններն ունեն երկու տարատեսակ։ Գլխավոր նախադասությունը ցույց է տալիս մի գործողություն, որը շարունակվում է՝ ա) կամ մինչև որևէ արդյունքի հասնելը, որի մասին խոսվում է երկրորդական նախադասության մեջ և բ) կամ մինչև նրա դադարեցումը երկրորդական նախադասության մեջ նկարագրված գործողությամբ։ Երկու դեպքում էլ գլխավոր նախադասության գործողությունը նախորդում է երկրորդական նախադասության գործողությանը։ Սակայն այստեղ ուշադրություն է դարձվում ոչ թե այն բանի վրա, որ մի գործողություն հաջորդում է մյուսին, այլ այն բանի վրա, որ մի գործողություն շարունակվում է այնքան, մինչև սկսվում է մի այլ գործողություն։ Հենց սրանով էլ այս նախադասությունները տարբերվում են «երբ» շաղկապով միացող ժամանակային հաջորդականության նշանակություն ունեցող նախադասություններից։

«Մինչև», «մինչև որ» շաղկապներով միացող նախադասությունները սովորաբար լինում են հետագաս և ունենում են չափի իմաստային երանգ. ցույց են տալիս գործողության կատարման ժամանակի չափը, այն, թե ինչքան ժամանակ է տևել գլխավոր նախադասության գործողությունը։

Գլխավոր նախադասության մեջ այս երկրորդական նախադասություններին կարող են համապատասխանել «այնքան ժամանակ», «այնքան» հարաբերյալները։

Օրինակներ՝ «Եվ նայում էր այնքան, մինչև որ վերջինս Ազատի խորաձորն իջնելով խոտորում էր դեպի Գառնո արահետը» (Մ. Գ. Մ. 10)։ «Նա սատար կլինի Գալումովի ստորաբաժանումներին այնքան ժամանակ, մինչև որ ստանա մի հրաման» (Հ. Ք. 219)։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները այս բարդ նախադասություններում ունեն ժամանակների հետևյալ հաջորդականությունը. երբ գլխավոր նախադասության ստորոգյալը դրված է լինում ներկա կամ անցյալ անկատար ժամանակներով և ունենում է սովորության նշանակություն, ապա երկրորդական նախադասության ստորոգյալը իր ժամանակով համաձայնում է նրան՝ դրվելով ներկա կամ անցյալ անկատար ժամանակներով. օրինակ՝ «Ու բոլորն այսպես խառնվում են իրար, մինչև որ տղաները.... կարգի են հրավիրում նրանց» (Ս. Զ.)։

Գլխավոր նախադասության անցյալ անկատար ժամանակին երկրորդական նախադասության մեջ կարող է համապատասխանել նաև անցյալ կատարյալ ժամանակը։ Այս դեպքում արդեն այն չունի կրկնվող գործողության նշանակություն, այլ ցույց է տալիս ընդ-

հանրապես անցյալում կատարված մի տևական գործողություն, որն ընդհատվել է մի այլ գործողության կատարմամբ.

Օրինակ՝

«Ծառից ծառ անվերջ, ծառերի ետև
Թիթեռը կախարդ թռչում էր, փախչում,
Կրկին վազում էր աղջիկն հևհև,
Մինչև որ խավարն իջավ անտառում» (Ավ. Իս. 1. 308)։

Գլխավոր նախադասության մեջ առկա անցյալ կատարյալ ժամանակին երկրորդական նախադասության մեջ ևս համապատասխանում է անցյալ կատարյալ ժամանակ.

Օրինակ՝ «Հայացքներով հետևեցին նրան, մինչև որ դուրս եկավ այգու դարպասից» (Հ. Ք. 40)։

Գլխավոր նախադասության պայմանական եղանակին երկրորդական նախադասության մեջ համապատասխանում է ըղձական եղանակ, իսկ հրամայականին՝ պայմանական.

Օրինակներ՝

«Էդքան էլ կապրեմ դեռ էսպես թեք ընկած,
Մինչև լրանա մի հազար տարին» (Հ. Թ., 56)։

«Ցարեմ, տանջեցեմ այս մարդկանց ամենասոսկալի տանջանքներով, մինչև որ նրանք կճայտնեն մեզ ծածկված գանձերի տեղը» (Մ. Գ. Մ., 218)։

«Մինչև», «մինչև որ» շաղկապներով միացող ժամանակի երկրորդական նախադասությունները, բացի ժամանակային սահմանափակության նշանակությունից, կարող են ունենալ նաև պայմանի իմաստային երանգ։ Այս տիպի նախադասությունների կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ թե գլխավոր և թե երկրորդական նախադասություններն ունեն ժխտական կառուցվածք։

Օրինակներ՝ «Նա հաստատ գիտեր, որ Բեշիրը չի ճանգստանա, մինչև որ յուր կրած պարտության վրեժը չլուծե» (Մ. Գ. Մ., 332)։

«Այո, մինչև որ հաշիվս չվերջացնի, տանից դուրս չեմ գալու» (Ս. Զ. Զ. Գ., 115)։

Սրանք են ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների արտահայտած իմաստային փոխհարաբերությունները և նրանց արտահայտման քերականական միջոցները։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ.— Ակսել Բակունց, Սև ցելերի սերմնացանը, Երևան, 1933։
Ավ. Իս.,— Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հատոր 1, Երևան, 1950։

Գ. Մ.— Գուրգեն Մահարի, Երկեր, Երևան, 1954։
Գ. Ս. Թ.— Գարեգին Սևունց, Թեհրան, Երևան, 1952։
Դ. Ք. — Զարզանդ Դարյան, Քննություն, Երևան, 1953։
Հ. Հ.— Հովհաննես Թումանյան, Երկեր, Երևան, 1938։
Հ. Ք.— Հրաչյա Քոչար, Մեծ տան զավակները, Երևան, 1952։
Մ. Գ. Մ.— Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Երևան, 1951։
Ն. Հ.— Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, 1—6 Հ., Երևան, 1946։
Ն. Զ. Հ.— Նաիրի Զարյան, Հացավան, Երևան, 1949։
Շ.— Ալ. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, 1—6 հ., Երևան, 1950։
Ս. Զ. Զ. Գ.— Սա. Զորյան, Զմռան գիշերներ, Երևան, 1935։
Ս. Զ. Պ. Թ.— Սա. Զորյան, Պապ թագավոր, Երևան, 1944։
Ս. Խ. Հ.— Սերո Խանզադյան, Հողը, 1954։
Ս. Հ.— Սովետական Հայաստան, օրաթերթ, Երևան։
Վ. Փ.— Վրթանես Փափազյան, Ընտիր երկեր, Երևան, 1951։
Ք. Թ. Պ.— Քր. Թափալչյան, Պատերազմ, հատոր 1, 1946։

Н. А. ПАРНАСЯН

ПРИДАТОЧНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ ВРЕМЕНИ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Резюме

В настоящей статье исследованы придаточные предложения времени современного армянского языка, показаны структурные особенности главных и придаточных предложений при наличии разных смысловых взаимоотношений (одновременность, разновременность действий), грамматические средства выражения их взаимосвязи.

Связь придаточных предложений времени с главным предложением осуществляется при помощи таких союзов и относительных слов, которые своими лексическими значениями показывают временные отношения. Они следующие: *երբ* (когда), *մինչև* (пока), *մինչդեռ* (в то время как), *քանի* (сколько), *քանի դեռ* (пока что), *հենց*, *հենց որ* (как только).

Придаточные предложения времени могут связываться также союзом *որ* (что) и словосочетанием *թե չէ*. Последнее ставится в конце придаточного предложения, которое в этом случае всегда ставится перед главным предложением.

При выражении временных отношений важное значение имеют также следующие грамматические средства: 1) последовательность времен главного и придаточного предложений, 2) порядок главного и придаточного предложений, 3) лексический состав главного предложения, особенно применение наречий и модальных слов (*հանկարծ* — вдруг, *դեռ* — ещё, *արդեն* — уже, *հազիվ* — едва и др.).